ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Միսակ Ավագյան
Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի դասախոս, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցությունը ստեղծեց նրա անդամ երկրների՝ Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի, հետագայում նաև Ղրղզստանի հետ տնտեսական համագործակցության որակապես նոր փուլի մեկնարկի հնարավորություն, որը նախատեսում է ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժ անդամ երկրների միջև: 2015-2016թթ. ընկած ժամանակահատվածում ԵԱՏՄ երկրների հետ ՀՀ արտաքին ապրանքաշրջանառության համակողմանի վերլուծությունը ցույց է տալիս, որ ԵԱՏՄ-ին ՀՀ-ի ինտեգրման էֆեկտը թե՛ արտահանման, և թե՛ ներմուծման մասով կարելի է գնահատել դրական: Միևնույն ժամանակ առկա են ԵԱՏՄ անդամ առանձին երկրների հետ ապրանքաշրջանառության և արտահանման ապրանքային կառուցվածքի բազմազանեցման հետ կապված խնդիրներ:

Հիմնաբառեր. ինտեգրման էֆեկտ, արտաքին ապրանքաշրջանառություն, առևտրային կապեր, ինտեգրացիոն խմբավորում, առևտրային գործընկեր, մաքսատուրք, ներմուծում, արտահանում:

2015 թվականի հունվարի 2-ից Եվրասիական տնտեսական միությանը (այսուհետ՝ ԵԱՏՄ) Հայաստանի անդամակցությունը ստեղծեց նրա անդամ երկրների՝ Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի, հետագայում նաև

Ղրղզստանի հետ տնտեսական համագործակցության որակապես նոր փուլի մեկնարկի հնարավորություն, որը նախատեսում է ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժ անդամ երկրների միջև:

Ընդհանրապես, ԵԱՏՄ-ին ՀՀ անդամակցության նպատակահարմարության և արդյունավետության հարցի շուրջ կան տարբեր կարծիքներ և միմյանց հակասող տեսակետներ: Փորձագետների մի մասը, ԵԱՏՄ-ին մեր երկրի անդամակցումը դիտարկում են որպես հետագա տնտեսական աճի ապահովման հիմնական գործոն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԵԱՏՄ-ին անդամակցումը հնարավորություն է ընձեռում առանց սահմանափակումների մուտք գործել 180 մլն բնակչություն ունեցող ընդհանուր շուկա՝ նպաստելով արտահանման ծավալների ընդլայնմանը, ներդրումների ներգրավման աճին, իսկ մյուս մասը, ընդհակառակը, գտնում են, որ ԵԱՏՄ-ին անդամակցության արդյունքում Հայաստանը կորցրեց ԵՄ-ի հետ տնտեսական համագործակցությունը ինտենսիվորեն խորացնելու և կառույցին ինտեգրվելու, տնտեսական կայուն զարգացում ապահովելու, արևմտյան զարգացած երկրներից լայնամասշտաբ ներդրումներ և մատչելի արտաքին վարկային ռեսուրսներ ներգրավելու հետագա հնարավորությունը, ինչը կարող է առաջ բերել տնտեսական անվտանգության ապահովմանն ուղղված նոր սպառնալիքներ:

Կարծում ենք, որ ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցության արդյունավետությունն ունի գնահատման տարբեր ասպեկտներ՝ քաղաքական, անվտանգային և տնտեսական: ԵԱՏՄ գործընթացներում վճռորոշ դերակատարում ունեցող Ռուսաստանը, որը տասնամյակներ շարունակ հանդիսանում է Հայաստանի ռազմավարական գործընկերը, ունի առանձնահատուկ տեղ մեր երկրի թե՛ քաղաքական, և թե՛ տնտեսական կյանքում: Մի կողմից այդ երկիրն ակտիվորեն մասնակցում է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման գործընթացին՝ հանդիսանալով ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ երեք երկրներից մեկը, մյուս կողմից թե Հայաստանը 1992 թվականից անդամակցում է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը (ՀԱՊԿ), որը կոչված է հավաքական պաշտպանության հիման վրա ապահովելու անդամ երկրների անկախությունը, տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը: Տեսակետը, թե ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցումը պայմանավորված է առաջին հերթին երկրի արտաքին անվտանգության, այդ թվում՝ ՀԱՊԿ շրջանակներում անդամ երկրների միջև փոխհամագործակցության մակարդակի բարձրացմամբ, չի կարող լինել միանշանակ, որովհետև, հանդիսանալով ՀԱՊԿ անդամ, Հայաստանը պաշտպանական ոլորտում գործընկերային մակարդակով համագործակցում է նաև Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպության (ՆԱՏՕ) հետ, որը եվրոպական ինտեգրմանն ուղղված կարևորագույն քայլերից մեկն է: Հարկ է նկատել, որ ՀԱՊԿ անդամ են հանդիսանում ԵԱՏՄ մասնակից բոլոր պետությունները՝ Բելառուսը, Ղազախստանը, Ղրղզստա-

նը, Ռուսաստանը, ինչպես նաև Տաջիկստանը, ինչը նշանակում է, որ ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցումը կարող է հանգեցնել ՀԱՊԿ շրջանակներում անվտանգության հարցերի շուրջ համագործակցության և Հայաստանի տարածքային ամբողջականության պաշտպանության մակարդակի բարձրացմանը:

Ինչ վերաբերում է տնտեսական ոլորտում ԵԱՏՄ-ին ՀՀ անդամակցության արդյունավետությանը, ապա դրա գնահատումը հնարավոր է իրականացնել կառույցի շրջանակներում իրականացվող գործընթացների և դրանց արդյունքների համակողմանի վերլուծության արդյունքում:

Նախ դիտարկենք ԵԱՏՄ երկրների հետ ՀՀ ապրանքաշրջանառության ծավալների շարժընթացը ՀՀ արտաքին առևտրի վրա ինտեգրման էֆեկտը պարզելու համար: Վիճակագրական տվյալները վկայում են, որ ԵԱՏՄ երկրների հետ արտաքին ապրանքաշրջանառության առումով Հայաստանի անդամակցության առաջին տարին բարեհաջող չի եղել, քանի որ նախորդ՝ 2014թ.-ի համեմատ, 2015թ.-ին արձանագրվել է կառույցի անդամ պետությունների հետ արտաքին ապրանքաշրջանառության ծավալի 17.2%-ով կրճատում՝ կազմելով 1.2 մլրդ ԱՄՆ դոլար, այն դեպքում, երբ 2014թ.-ին այդ ցուցանիշը կազմել է մոտ 1.5 մլրդ ԱՄՆ դոլար: Վերջինս հիմնականում պայմանավորված էր ռուս-ուկրաինական պատերազմի պատճառով Ռուսաստանի նկատմամբ սահմանված տնտեսական պատժամիջոցներով և դրա արդյունքում այդ երկրում սկիզբ առած ֆինանսատնտեսական ճգնաժամով: Իսկ քանի որ ԵԱՏՄ երկրների շարքում Ռուսաստանը հանդիսանում է Հայաստանի հիմնական առևտրային գործընկերը, հետևաբար այն չէր կարող բացասաբար չանդրադառնալ երկկողմ առևտրային կապերի վրա: Ճիշտ է, 2016թ.-ին 2015թ.-ի համեմատ ապրանքաշրջանառությունը աճել է 15.2%-ով և կազմել մոտ 1.4 մլրդ ԱՄՆ դոլար, սակայն, միևնույն է, այդ ցուցանիշը դեռևս 4.6%-ով փոքր է մինչ ԵԱՏՄ-ի ձևավորումը և դրան մեր երկրի ինտեգրումը գրանցված ցուցանիշից:

Նույն միտումն արձանագրվել է նաև արտահանման և ներմուծման շարժընթացի մասով: Այսպես, 2015թ.-ին դրանց ծավալները կազմել են համապատասխանաբար 0.25 մլրդ և 0.97 մլրդ ԱՄՆ դոլար՝ 2014թ.-ի համեմատ նվազելով 21.1 և 16.1%-ով, իսկ 2016թ.-ին 2015թ.-ի համեմատ դրանք աճել են համապատասխանաբար 52.6 և 5.3%-ով, որի արդյունքում արտահանման ծավալը կազմել է 0.37 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ ներմուծման ծավալը՝ 1.02 մլրդ ԱՄՆ դոլար: Նկատենք, որ, ի տարբերություն ներմուծման, արտահանման ծավալը արդեն իսկ 2016թ.-ին գերազանցել է 2014թ.-ին գրանցված մակարդակը (տես՝ աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ՀՀ արտաքին ապրանքաշրջանառության ծավալները ԵԱՏՄ երկրների հետ 2012–2016թթ. ընթացքում[1]

մլն ԱՄՆ դոլար

	2012	2013	2014	2015	2016
Արտաքին ապրանքաշրջանառություն					
***ԵԱՏՄ երկրներ**, այդ թվում՝*	***1,390.0***	***1,417.8***	***1,479.2***	***1,224.8***	***1,411.1***
Ռուսաստան	1,336.5	1,359.3	1,431.1	1,187.3	1,367.0
Բելառուս	40.3	49.4	40.1	32.5	37.5
Ղազախստան	12.9	8.0	7.5	4.5	6.6
Ղրղզստան	0.3	1.0	0.5	0.5	0.0
Արտահանում					
***ԵԱՏՄ երկրներ**, որից*	***290.0***	***351.0***	***324.6***	***256.2***	***391.1***
Ռուսաստան	279.1	334.1	308.3	244.9	371.0
Բելառուս	6.7	8.6	9.0	6.8	14.1
Ղազախստան	4.0	7.3	7.0	4.2	6.0
Ղրղզստան	0.2	1.0	0.4	0.4	0.0
Ներմուծում					
***ԵԱՏՄ երկրներ**, որից*	***1,100.0***	***1,066.8***	***1,154.6***	***968.5***	***1,020.1***
Ռուսաստան	1,057.4	1,025.2	1,122.9	942.4	996.0
Բելառուս	33.6	40.9	31.0	25.7	23.4
Ղազախստան	8.9	0.7	0.6	0.4	0.7
Ղրղզստան	0.1	0.01	0.1	0.1	0.0

1-ին և 2-րդ աղյուսակներից ակնհայտ է, որ ԵԱՏՄ երկրների շարքում հիմնական առևտրային գործընկեր երկիրը հանդիսանում է Ռուսաստանը, որին 2016թ.-ին բաժին է ընկել ԵԱՏՄ արտահանման ընդհանուր ծավալի 94.9%-ը և ներմուծման ընդհանուր ծավալի 97.6%-ը: Ի դեպ, Ռուսաստանը առաջին տեղն է զբաղեցնում նաև ՀՀ ընդհանուր արտաքին առևտրի մեջ (2016թ. այդ երկրի տեսակարար կշիռը մեր երկրի արտաքին ապրանքաշրջանառության, արտահանման և ներմուծման մեջ կազմել է համապատասխանաբար 26.9%, 20.8% և 30.3%[2]): Մնացած երեք երկրները՝ Բելառուսը, Ղազախստանը և Ղրղզստանը, միասին զբաղեցնում են ԵԱՏՄ երկրների հետ ապրանքաշրջանառության ընդամենը 3.1%-ը, ներմուծման 5.13%-ը և արտահանման 2.4%-ը, ընդ որում, Բելառուսը զբաղեցնում է երկրորդ տեղը, իսկ Ղրղզստանի հետ առևտրային կապերը գրեթե բացակայում են:

1 Տես՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2016, էջ 473, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-դեկտեմբերին, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2017, էջ 118:

2 Տես՝ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-դեկտեմբերին, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2017, էջ 117-118:

Աղյուսակ 2

ԵԱՏՄ անդամ-երկրների տեսակարար կշիռը ԵԱՏՄ հետ ՀՀ արտաքին ապրանքաշրջանառության մեջ 2014-2016թթ. ընթացքում[1]

%

	2012	2013	2014	2015	2016
Արտաքին ապրանքաշրջանառություն, այդ թվում՝	**100.0**	**100.0**	**100.0**	**100.0**	**100.0**
Ռուսաստան	96.2	95.9	96.8	96.9	96.9
Բելառուս	2.9	3.5	2.7	2.7	2.7
Ղազախստան	0.9	0.6	0.5	0.4	0.5
Ղրղզստան	0.0	0.1	0.0	0.0	0.0
Արտահանում, այդ թվում՝	**100.0**	**100.0**	**100.0**	**100.0**	**100.0**
Ռուսաստան	96.2	95.2	95.0	95.6	94.9
Բելառուս	2.3	2.4	2.8	2.7	3.6
Ղազախստան	1.4	2.1	2.1	1.6	1.5
Ղրղզստան	0.1	0.3	0.1	0.1	0.0
Ներմուծում, այդ թվում՝	**100.0**	**100.0**	**100.0**	**100.0**	**100.0**
Ռուսաստան	96.1	96.1	97.3	97.3	97.6
Բելառուս	3.1	3.8	2.7	2.6	2.3
Ղազախստան	0.8	0.1	0.0	0.0	0.1
Ղրղզստան	0.0	0.0	0.0	0.0	0.0

Համեմատության համար նշենք, որ ՀՀ արտահանման կառուցվածքում ԵՄ երկրների տեսակարար կշիռը մշտապես գերազանցել է ԵԱՏՄ երկրների տեսակարար կշռին: Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, ՀՀ արտահանման մեջ ԵՄ երկրների մասնաբաժինը վերջին 5 տարիների ընթացքում աստիճանաբար նվազել է՝ 37.1%-ից՝ իջնելով 26.9%-ի, փոխարենն ավելացել է այլ երկրների (որոնք չեն հանդիսանում ԵՄ կամ ԵԱՏՄ անդամ) բաժինը, որը աստիճանաբար աճել է՝ 2012թ.-ի 41.9%-ի համեմատ՝ 2016թ.-ին կազմելով 51.2%: Մինչդեռ ԵԱՏՄ երկրների մասնաբաժինը ՀՀ արտահանման մեջ 2012-2016թթ. ընթացքում մնացել է գրեթե անփոփոխ (մոտ 21%), իսկ 2015թ.-ին նույնիսկ կտրուկ նվազել է (հասնելով մինչև 17.3%-ի):

Այսպիսով, ԵԱՏՄ-ին Հայաստանի ինտեգրումը, որը ենթադրում է խմբավորման անդամ երկրների միջև փոխադարձ առևտրի, այդ թվում՝ արտահանման ծավալների ընդլայնում, չի հանգեցրել ՀՀ արտահանման կառուցվածքում ԵԱՏՄ երկրներ արտահանվող ապրանքների մասնաբաժնի էական աճի՝ չնայած վերջինիս ծավալային ավելացմանը: Հետաքրքրական է, որ ԵՄ երկրներ արտահանվող ապրանքների ծավալի կրճատմանը զուգընթաց՝ ԵԱՏՄ ուղղվող արտահանման աճի փոխարեն զգալիորեն մեծանում է դեպի այլ երկրներ արտահանման մասնաբաժինը: Նշվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ տեղական արտադրողները արտահանման մասով շա-

1 Տես՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2016, էջ 473, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-դեկտեմբերին, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2017, էջ 118:

ռունակում են կողմնորոշված մնալ առավելապես դեպի ԵՄ և այլ երկրներ (2016թ.-ի տվյալներով՝ Բուլղարիա՝ 8.5%, Վրաստան՝ 8.2%, Կանադա՝ 7.8%, Գերմանիա՝ 7.8%, Իրաք՝ 7.7%, Չինաստան՝ 5.4%, Իրան՝ 4.2%, Շվեյցարիա՝ 4.2%, ԱՄԷ՝ 3.6% և այլն[1]):

Գծապատկեր 1. ԵՄ, ԵԱՏՄ և այլ երկրների տեսակարար կշիռները ՀՀ արտահանման ընդհանուր ծավալի մեջ (%)[2]

Ինչ վերաբերում է ՀՀ ներմուծման կառուցվածքին, ապա սկսած 2014թ.-ից՝ ՀՀ ընդհանուր ներմուծման մեջ ԵԱՏՄ երկրներից ներմուծման մասնաբաժինը գերազանցում է ԵՄ երկրներից ներմուծման մասնաբաժնին: Ի տարբերություն նշված երկրներ արտահանման շարժընթացի, որտեղ ԵՄ երկրների մասնաբաժնի կրճատումը չի հանգեցրել դեպի ԵԱՏՄ երկրներ արտահանման տեսակարար կշռի աճին, ներմուծման դեպքում նկատվում է հակառակ պատկերը: Գծապատկեր 2-ից պարզ է դառնում, որ 2013-2016թթ. ընթացքում ԵՄ երկրներից իրականացվող ներմուծման մասնաբաժնի աստիճանական կրճատմանը զուգընթաց՝ ՀՀ ընդհանուր ներմուծման մեջ անընդհատ աճում է ԵԱՏՄ երկրների տեսակարար կշիռը: Հարկ է նկատել, որ դրան զուգահեռ նվազում է նաև այլ երկրներից ներմուծվող ապրանքների մասնաբաժինը: Այսպես, եթե 2013թ.-ին ԵԱՏՄ, ԵՄ և այլ երկրներից ներմուծման տեսակարար կշիռները կազմել են ՀՀ ներմուծման

1 Տես՝ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-դեկտեմբերին, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2017, էջ 118-119:
2 Տես՝ Աղյուսակը կազմվել է Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016 (էջ 473), ՀՀ ԱՎԾ, Երևան, 2016, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-դեկտեմբերին, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2017 (էջ 118) տվյալների հիման վրա:

համապատասխանաբար 24.3, 26.4 և 49.2%-ը, ապա 2016թ. այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 31.0, 22.5 և 46.5%: Վերջինս վկայում է այն մասին, որ ԵԱՏՄ-ին ՀՀ ինտեգրման արդյունքում այդ երկրներից ներմուծվող ապրանքների մաքսատուրքերի վերացումը և երրորդ, այդ թվում՝ ԵՄ երկրներից ներմուծվող ապրանքների մաքսատուրքերի բարձրացումը տարել է նրան, որ ՀՀ տնտեսավարող սուբյեկտները հակված են ներմուծումն իրականացնել ԵԱՏՄ երկրներից:

Գծապատկեր 2. ԵՄ, ԵԱՏՄ և այլ երկրների տեսակարար կշիռները ՀՀ ներմուծման ընդհանուր ծավալի մեջ (%)[1]

ՀՀ-ից ԵԱՏՄ երկրներ արտահանվող ապրանքների կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս, որ 2015թ.-ի տվյալներով նշված երկրներ արտահանվող ապրանքների շարքում առաջին տեղում է գտնվում «Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ» ապրանքային խումբը, որը կազմում է ԵԱՏՄ արտահանման ընդհանուր ծավալի 38.2%-ը կամ ՀՀ-ից տվյալ ապրանքային խմբի արտահանման ընդհանուր ծավալի 78.3%ը: Նկատենք, որ այս ապրանքախմբի 94.2%-ն (92,277.3 հազ. ԱՄՆ դոլար) ուղղվել է Ռուսաստան, 4.6%-ը (4,546.0 հազ. ԱՄՆ դոլար)՝ Բելառուս, 1.1%-ը (1,105.6 հազ. ԱՄՆ դոլար)՝ Ղազախստան և միայն 0.1%-ը (59.9 հազ. ԱՄՆ դոլար)՝ Ղրղզստան[2]: Նշենք, որ Ռուսաստան արտահանվող ապրանքների մոտ

1 Տես՝ Աղյուսակը կազմվել է Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2016 (էջ 473), Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-դեկտեմբերին, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2017 (էջ 118) տվյալների հիման վրա:
2 Ըստ առանձին երկրների ապրանքային խմբերի արտահանման և ներմուծման վերաբերյալ տվյալները հաշվարկվել և ներկայացվել են ՀՀ արտաքին առևտուրը 2015 թվականին (Ըստ արտաքին

37.7%-ը բաժին է ընկնում «Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ» ապրանքային խմբին:

ԵԱՏՄ արտահանման կառուցվածքում երկրորդ տեղում է գտնվում «Կաթ և կաթնամթերք, թռչնի ձու, բնական մեղր և այլ կենդանական ծագման սննդամթերք» ապրանքային խումբը (9.1%), ընդ որում, ՀՀ-ից այս ապրանքային խմբի արտահանման գերակշիռ մասը (97.5%) ուղղվում է ԵԱՏՄ երկրներ: Հատկանշական է, որ ԵԱՏՄ շրջանակներում ապրանքների այս խումբն ամբողջությամբ արտահանվել է միայն Ռուսաստան:

Աղյուսակ 3

ԵԱՏՄ երկրներ ՀՀ արտահանումն ըստ հիմնական ապրանքային խմբերի ի հետ 2015 թվականին[1]

	Ապրանքային խմբի անվանումը	**Արտահանում (հազ. ԱՄՆ դոլար)**	***Տես. կշիռը ԵԱՏՄ արտա-հանման մեջ (%)***	***Տես. կշիռը ՀՀ-ից տվյալ ապրանքային խմբի ընդհ. արտա-հանման մեջ (%)***
1	Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ	97,988.8	*38.2*	*78.3*
2	Կաթ և կաթնամթերք, թռչնի ձու, բնական մեղր և այլ կենդանական ծագման սննդամթերք	23,413.9	*9.1*	*97.5*
3	Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքով	22,435.0	*8.8*	*36.5*
4	Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք	14,737.9	*5.8*	*72.9*
5	Ձուկ և խեցգետնավորներ, մանրուքներ և այլ ծովային անողնաշարավորներ	13,483.6	*5.3*	*91.5*
6	Ուտելի մրգեր և ընկույզներ, ցիտրուսային կամ բոստանային մշակաբույսերի կեղևներ և կլեպներ	12,410.5	*4.8*	*84.9*
7	Բանջարեղեն և այլ կերային արմատապտուղներ և ելապտուղներ	12,003.4	*4.7*	*90.0*
8	Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ	9,335.8	*3.6*	*4.8*
9	Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական մասեր	5,409.6	*2.1*	*53.5*
10	Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ մեքենայական կամ ձեռքի գործվածքով	5,192.0	*2.0*	*82.3*

Երրորդ հորիզոնականում է գտնվում «Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքով»

տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 2-նիշ դասակարգման), վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2016 (էջ 56-59, 61-66) տվյալների հիման վրա

1 Աղյուսակը կազմվել է ՀՀ արտաքին առևտուրը 2015 թվականին (Ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 2-նիշ դասակարգման), վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2016 (էջ 56-59, 61-66) տվյալների հիման վրա

խումբը, որի տեսակարար կշիռը ԵԱՏՄ արտահանման ծավալի մեջ կազմում է 8.8%, իսկ ՀՀ-ից արտահանվող համանման ապրանքային խմբի ընդհանուր ծավալի մեջ՝ 36.5%: Այս ապրանքային խմբի զգալի մասը նույնպես՝ մոտ 99.9%, (59.9 հազ. ԱՄՆ դոլար) ԵԱՏՄ երկրներից ուղղվել է Ռուսաստան (22,405.5 հազ. ԱՄՆ դոլար) և միայն փոքր մասը՝ 0.1%-ը, Բելառուս (29.5 հազ. ԱՄՆ դոլար):

ԵԱՏՄ արտահանվող հիմնական տասը ապրանքային խմբերի մեջ են մտնում նաև «Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք» (5.8%), «Ձուկ և խեցգետնավորներ, մանրուքներ և այլ ծովային անողնաշարավորներ» (5.3%), «Ուտելի մրգեր և ընկույզներ, ցիտրուսային կամ բոստանային մշակաբույսերի կեղևներ և կլեպներ» (4.8%), «Բանջարեղեն և այլ կերային արմատապտուղներ և ելապտուղներ» (4.7%), «Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ» (3.6%), «Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական մասեր» (2.1%), «Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ մեքենայական կամ ձեռքի գործվածքով» (2.0%):

Ինչ վերաբերում է ներմուծման ապրանքային կառուցվածքին, ապա ԵԱՏՄ երկրներից իրականացված ներմուծման մոտ կեսը (48.4%) բաժին է ընկնում «Հանքային վառելանյութեր, նավթ և նավթամթերք, բիտումային միջոցներ, մոմանյութեր» ապրանքային խմբին: Ընդ որում, այս ապրանքային խմբի 75.0%-ը ներմուծվում է հենց ԵԱՏՄ երկրներից: Հայաստանը ԵԱՏՄ երկրների շարքում այս խմբի մեջ մտնող ապրանքները գրեթե ամբողջությամբ (99.9%) ներկրում է Ռուսաստանից: Հարկ է նշել, որ Ռուսաստանից Հայաստան իրականացվող ներմուծման մոտ կեսը (49.7%) կազմում է հենց տվյալ ապրանքային խումբը: Պարզ է, որ խոսքը հիմնականում վերաբերում է Ռուսաստանից ներկրվող բնական գազին:

Երկրորդ տեղում է գտնվում «Հացահատիկներ» ապրանքային խումբը (8.8%): Հատկանշական է, որ ՀՀ տարածք ներմուծվող հացահատիկի գերակշիռ մասը (մոտ 90.7%) ներմուծվում է ԵԱՏՄ երկրներից: Ի դեպ, ԵԱՏՄ երկրներից «Հացահատիկներ» ապրանքային խմբի մեջ մտնող ապրանքները ներմուծվում են միայն Ռուսաստանից:

ԵԱՏՄ երկրներից ներմուծվող ապրանքատեսակներից նկատելի մասնաբաժին է զբաղեցնում նաև «Այլումին և իրեր դրանից» ապրանքային խումբը (6.8%): ԵԱՏՄ երկրներից ներմուծվող այս ապրանքային խումբը ևս էական տեղ է գրավում ՀՀ կողմից տվյալ ապրանքախմբի ներմուծման ընդհանուր ծավալի մեջ (90.7%):

ԵԱՏՄ երկրներից ներմուծվող ապրանքների շարքում համեմատաբար մեծ տեսակարար ունեն նաև «Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր, սննդային ճարպեր, մեղրամոմ» (3.0%), «Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական մասեր» (3.0%), «Իրեր սև մետաղներից» (2.1%), «Վերգետնյա տրանսպորտային միջոցներ, բացի

երկաթուղային կամ տրամվայի շարժակազմը, դրանց մասեր և սարքավորումներ» (1.9%), «Կաուչուկ, ռետին և դրանցից պատրաստված իրեր» (1.8%), «Էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ, ձայնագրող ապարատներ և դրանց մասեր» (1.8%) և «Կակաո և դրանից պատրաստված մթերք» (1.7%) ապրանքային խմբերը:

Աղյուսակ 4

ԵԱՏՄ երկրներից ՀՀ ներմուծումն ըստ հիմնական ապրանքային խմբերի 2015 թվականին[1]

	Ապրանքային խմբի անվանումը	**Ներմուծում (հազ. ԱՄՆ դոլար)**	***Տես. կշիռը ԵԱՏՄ ներմուծման մեջ (%)***	***Տես. կշիռը ՀՀ կողմից գնված ապրանքային խմբի ընդհ. ներմուծման մեջ (%)***
1	Հանքային վառելանյութեր, նավթ և նավթամթերք, բիտումային միջոցներ, մոմանյութեր	*468,520.4*	*48.4*	*75.0*
2	Հացահատիկներ	*85,549.2*	*8.8*	*90.7*
3	Այլումին և իրեր դրանից	*65,587.1*	*6.8*	*76.0*
4	Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր, սննդային ճարպեր, մեղրամոմ	*29,284.8*	*3.0*	*65.4*
5	Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական մասեր	*28,790.4*	*3.0*	*10.7*
6	Իրեր սև մետաղներից	*20,381.5*	*2.1*	*28.5*
7	Վերգետնյա տրանսպորտային միջոցներ, բացի երկաթուղային կամ տրամվայի շարժակազմը, դրանց մասեր և սարքավորումներ	*18,357.7*	*1.9*	*9.8*
8	Կաուչուկ, ռետին և դրանցից պատրաստված իրեր	*17,659.4*	*1.8*	*45.5*
9	Էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ, ձայնագրող ապարատներ և դրանց մասեր	*17,101.5*	*1.8*	*11.7*
10	Կակաո և դրանից պատրաստված մթերք	*16,342.9*	*1.7*	*40.8*

Այսպիսով, վերլուծելով ԵԱՏՄ երկրների հետ Հայաստանի առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման շարժընթացը՝ կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները.

2015թ.-ի համեմատ՝ 2016թ.-ին դեպի ԵԱՏՄ արտահանման ծավալի ավելի քան 50% աճը փաստում է, որ ինտեգրացիոն խմբավորմանը ՀՀ անդամակցության արդյունքում ձևավորված արտահանման առավել բարենպաստ ռեժիմը արտահանողների համար ստեղծել է շահավետ պայմաններ՝ արտահանելու սեփական արտադրանքը ԵԱՏՄ տարածք: Չնայած նրան, որ նույն ժամանակահատվածում զուգահեռաբար աճել են նաև դե-

1 Աղյուսակը կազմվել է ՀՀ արտաքին առևտուրը 2015 թվականին (Ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի երկնիշ դասակարգման), վիճակագրական ժողովածուի, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2016, էջ 56-59, 61-66 տվյալների հիման վրա:

պի ԵՄ և այլ երկրներ արտահանման ծավալները (համապատասխանաբար 15.9 և 11.9%-ով)՝ այնուամենայնիվ, դեպի ԵԱՏՄ արտահանման ծավալի աճի տեմպի գերազանցումը դեպի ԵՄ և այլ երկրներ արտահանման ծավալի աճի տեմպին վկայում է այն մասին, որ ԵԱՏՄ-ին ՀՀ-ի ինտեգրման էֆեկտը արտահանման մասով գնահատվում է դրական: Նույնը գնահատականը կարելի է տալ նաև ներմուծմանը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2015թ.-ի համեմատ՝ 2016թ.-ին ԵԱՏՄ-ից ներմուծված ապրանքների աճի տեմպը կազմել է 5.3%, այն դեպքում, երբ մնացած (ԵՄ և այլն) երկրներից ներմուծման ծավալների աճի տեմպը կազմել է ընդամենը 0.1%:

Չնայած 2016թ.-ին ԵԱՏՄ հետ գրանցված ՀՀ ապրանքաշրջանառության ծավալների աճին՝ կառույցի շրջանակներում ՀՀ հիմնական առևտրային գործընկեր երկիրը շարունակում է մնալ Ռուսաստանը, որին բաժին է ընկնում թե՛ արտահանման, և թե՛ ներմուծման գերակշիռ մասը (ավելի քան 95%-ը): Ինչ խոսք, Ռուսաստանը մշտապես եղել և, կարծում ենք, առաջիկայում նույնպես շարունակելու է մնալ մեր երկրի գլխավոր առևտրային գործընկերը ոչ միայն ԵԱՏՄ շրջանակներում, այլև մնացած երկրների շարքում, մինչդեռ ակնհայտ է, որ ինտեգրման տնտեսական էֆեկտն առավել նկատելի է դառնում այն դեպքում, երբ երկիրն ունենում է բազմազանեցված առևտրատնտեսական կապեր կառույցի անդամ բոլոր երկրների հետ: Այս առումով, կարևորում ենք համապատասխան պետական մարմինների, մասնավորապես՝ Տնտեսական զարգացման և ներդրումների, ինչպես նաև Միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարությունների դերը ԵԱՏՄ անդամ մյուս երկրների՝ Բելառուսի, Ղազախստանի և Ղրղզստանի հետ երկկողմ տնտեսական կապերի ակտիվացման գործում:

ԵԱՏՄ հետ արտաքին ապրանքաշրջանառության ապրանքային կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս, որ մեր երկիրը դեպի ԵԱՏՄ իրականացվող արտահանման մեջ մասնագիտացված է հիմնականում «Պատրաստի սննդի արտադրանք» («Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ», «Կաթ և կաթնամթերք, թռչնի ձու, բնական մեղր և այլ կենդանական ծագման սննդամթերք») ապրանքային խմբի մեջ (2016թ.-ին վերջինիս տեսակարար կշիռը կազմել է ԵԱՏՄ արտահանման ծավալի 46.8%-ը), ինչը նշանակում է, որ դեպի այդ երկրներ արտահանման ապրանքային կառուցվածքում ևս առկա է բազմազանեցման խնդիր: Գտնում ենք, որ վերամշակող արդյունաբերական արտադրանքից բացի Հայաստանն ունի նաև դեպի ԵԱՏՄ երկրներ, հատկապես Ռուսաստան տեխնոլոգիատար ապրանքներ արտահանելու հնարավորություն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանում առկա է տեղեկատվական տեխնոլոգիաների զագացման մեծ ներուժ:

Այնուամենայնիվ, վերոնշյալ դիտարկումները հիմնված են կարճաժամկետ վերլուծությունների վրա, իսկ ԵԱՏՄ շրջանակներում ընթացող ինտեգրման գործընթացների արդյունավետության և, մասնավորապես, ՀՀ-ի՝ այդ միավորմանն ինտեգրվելու իրական տնտեսական արդյունքների մասին կարելի է պատկերացում կազմել միայն տևական ժամանակ անց:

АНАЛИЗ ТОРГОВОЭКОНОМИЧЕСКИХ СВЯЗЕЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИИ СО СТРАНАМИ–ЧЛЕНАМИ ЕВРАЗИЙКОГО ЭКОНОМИЧЕСКОГО СОЮЗА

Мисак Авагян
Преподаватель Европейской региональной образовательной академии, кандидат экономических наук, доцент

Членство Армении в Евразийском экономическом союзе сделало возможным начало качественного этапа экономического сотрудничества со странами–членами Союза – Россией, Белоруссией, Казахстаном, а впоследствии и с Киргизией, предусматривающего свободное движение товаров, услуг, капитала и рабочей силы между странами–членами Союза. Всесторонний анализ внешнеторгового оборота Армении со странами ЕАЭС в период 2015–2016гг. показывает, что эффект интеграции РА в ЕАЭС как с точки зрения экспорта, так и импорта можно оценить как положительный. В то же самое время с отдельными странами ЕАЭС имеют место вопросы, связанные с торговым оборотом и диверсификацией товарной структуры экспорта.

Ключевые слова: Интеграционный эффект, внешнеторговый оборот, торговые связи, интеграционная группировка, торговый партнер, таможенная пошлина, импорт, экспорт.

ANALYSIS OF TRADE–ECONOMIC RELATIONS OF THE REPUBLIC OF ARMENIA WITH THE MEMBER COUNTRIES OF THE EURASIAN ECONOMIC UNION

Misak Avagyan
Lecturer at European Regional Educational Academy, Ph.D. in economics, Associate professor

The membership of Armenia in the Eurasian Economic Union made it possible to start a qualitatively new stage of economic cooperation with the member countries of the Union – Russia, Belarus, Kazakhstan, and subsequently with Kyrgyzstan, which provides for free movement of goods, services, capital and labor between the member countries of the Union. Comprehensive analysis of Armenia's foreign trade turnover with the EAEU countries during 2015–2016 shows that the effect of Armenia's integration into the EAEU from the point of view of both exports and imports can be assessed positively. At the same time, there are issues related to the diversification of trade turnover and the commodity structure of export with member countries of the EAEC.

Key words: Integration effect, foreign trade turnover, trade relations, integration group, trading partner, customs duty, import, export.